



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

----- 2020 թվականի N ---Ա
քաղ. Երևան

**ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԱՅՌ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ,
ԴՐԱՆՑ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը, «Էներգետիկայի մասին» օրենքի 29-րդ հոդվածը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշում է.

1. Հաստատել գնումների կարգերի նկատմամբ պահանջների սահմանման ենթակա հանրային կազմակերպությունների (այսուհետ՝ Հանրային կազմակերպություններ) ցանկը՝ համաձայն N°1 հավելվածի:
2. Սահմանել Հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ պահանջները՝ համաձայն N°2 հավելվածի:
3. Սահմանել Հանրային կազմակերպությունների կողմից կատարված գնումների մասին հաշվետվության ներկայացման և գնումների կարգերի նկատմամբ սահմանված պահանջների կատարման մոնիթորինգի կարգը՝ համաձայն N°3 հավելվածի:
4. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի՝
 - 1) 2014 թվականի հունիսի 25-ի «Հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի և հանրային կազմակերպությունների կողմից

կատարված գնումների մասին հաշվետվության ներկայացման կարգերը հաստատելու մասին» №207Ա որոշումը.

2) 2017 թվականի սեպտեմբերի 13-ի «Գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների սահմանման ենթակա հանրային կազմակերպությունների ցանկը հաստատելու, այդ կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջներ սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №391Ա որոշումը:

5. Հանրային կազմակերպություններին՝ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը իրենց հաստատած գնումների կարգերը համապատասխանեցնել սույն որոշման 2-րդ կետով սահմանված պահանջներին և տեղեկատվություն ներկայացնել Հանձնաժողով:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
----- 2020թ.